Մրցույթ՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Ռուսաց լեզու (16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
1. դիմում (ձև 1),
2. 1 լուսանկար 3x4 չափի,
3. բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
4. անձը հաստատող փաստաթուղթ,
5.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
6. ինքնակենսագրություն (ձև 5),
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
10. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
11. Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում ՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն / մասնակացած լինելու դեպքում /

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 1-ից մինչև 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. փետրվարի 20-ին՝ ժամը 13:00-ին**, ՀՀ Արագածոտնի մարզի Լուսագյուղի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Լուսագյուղ 14 փողոց, շենք 1: Տեղեկությունների համար զանգահարել 093899928 հեռախոսահամարով: